

ՍՓՅՈՒՌԱՆՆԵՐ ԿՅԱՆՔ ԺԻՅՆԻ ԶԱՐԱԲԵՋՆԻՔԻ ԱՐՄՅԱՆ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

(1976 թ. հունվար-դեկտեմբեր)

ԲՈՒՆՎԱՐԻԱ

Հունիսի 7-ին Բուրգասում տեղի է ունեցել հանդիսավոր նիստ՝ նվիրված Ավարայրի ճակատամարտի 1525-ամյակին։ Դասախոսել է Հ. Հակոբյանը։

«Երևան», 18 հունիսի

Սոֆիայում հունիսի 24-ին տեղի է ունեցել Գրիգոր Զոհրապի ծննդյան 115-ամյակին նվիրված դասախոսություն։ Զեկուցումով հանդես է եկել Հովհաննես Համբարձումյանը։

«Երևան», 2 հուլիսի

ՌՈՒՄԻՆԻԱ

Լույս է տեսել պրոֆ. Շտեֆան Իոնեսկուի «Մանուկ-պեյ, դրամատեր և դիվանագետ XIX դարու սկզբի» աշխատությունը ռումիներեն («Տաճիա» հրատարակչություն, 1976)։ «Նոր կյանքը» հայտնում է, որ «հատորին հեղինակը, պրոֆ. Շտեֆան Զոնեսկու, իր «առաջաբանին» մեջ կհայտնե փաստագրական աղբյուրները, որոնք հիմը կազմած են իր աշխատության։ Ասոնց մեջ կարևոր տեղ մը կգրավեն այն նյութերը, զորս իրեն տրամադրության տակ դրած է հանգուցյալ արևելագետ Հ. Ճ. Սիրունի...»։

«Նոր կյանք», 17 դեկտեմբերի

Ինումինիայի Արևելագիտական ընկերության հրավերով փետրվարի 28-ին ԳՖՀ-ի Քիլ թաղաքի համալսարանի հայագետ, պրոֆ. Վերներ Վինտերը Բուխարեստի պատմության թանգարանում կարդացել է դասախոսություն՝ նվիրված հայ և հնդկավրոպական լեզուների կապերին։ Վերջում տեղի է ունեցել մտքերի փոխանակություն, որին մասնակցել են ռումինացի արևելագետները։

«Նոր կյանք», 5 մարտի

ԼՆՀԱՍՏԱՆ

Ավետիք Իսահակյանի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ ՀՀաստանում լույս է տեսել Իսահակյանի Բանաստեղծությունների ժողովա-

ծու, որին կցված հանդամանալից կենսագրականում Յազվիգա Բանդրովսկա-Վրուբլևսկան գրում է. «Իսահակյանի Բանաստեղծությունները լեհերեն լույս են տեսնում առաջին անգամ»։ Գրքի առաջաբանում Իսահակյան Բանաստեղծի արվեստի առանձնահատկությունների մասին գրել են Պյոտր Կունցևիչը և Անջեյ Շիմանսկին։ Ժողովածուն լեհերեն են թարգմանել Բոգդան Գեմբարսկին, Թադեուշ Խրուշչևսկին, Եժի Անջեյևիչը, Պյոտր Կունցևիչը, Ֆլորիան Նեուվաժնին։

«Գրական քեր», 19 մարտի

ՉԵԽՈՍԼՈՎԱԿԻԱ

Պրագայում չեխերեն լույս է տեսել «Հայաստանը թանգարան է բաց երկրի տակ» գիրքալրամբ։ Գրքում զետեղված են չեխ լուսանկարիչ Քամիլ Վիսկոչիի 150-ից ավելի սև-սպիտակ և գունավոր լուսանկարները, որոնք ներկայացնում են Հայաստանի պատմական հուշարձաններն ու ներկա կյանքը։

«Նոր կյանք», 10 դեկտեմբերի

ՀՈՒՆԳԱՐԻԱ

Բուդապեշտում սովետական գիտության և մշակույթի տան սրահներում բացվել է հայկական կիրառական արվեստի և գեղանկարչության ցուցահանդեսը։ Այստեղ ներկայացված են կիրառական արվեստի տարբեր բնագավառների խեցիգործության, արծաթագործության, փայտագրության, ասեղնագործության, կարպետագործության, ինչպես նաև գեղանկարչության մոտ 500 նմուշներ։

«Նոր կյանք», 13 օգոստոսի

Գ Կ Հ

Հայպրիգոս լույս է տեսել «Հայաստանի 3000 տարին» աշխատությունը։ Գրքի հեղինակն է անվանի գրականագետ Բուրխարդ Բրենտյեսը, որը գերմանացի ընթերցողին ծանոթացնում է հայ ժողովրդի պատմությանն ու մշակույթին, սովետական կարգերի օրոք ձեռք բերած հաջողություններին։ Գրքում զետեղված են Հայաս-

տանի տեսարժան վայրերի լուսանկարներ, որոնց զգալի մասը լուսանկարել է Հայաստան այցելած Հանս Ուլբրիխտ Հերոլդը: Աշխատությունը բաժանված է 9 գլուխների: Ընդարձակ բաժին է նվիրված գրերի գյուտին և գրականության, գիտության ու արհեստների զարգացման հարցերին:

Հաջողությամբ ու սիրով է գրված մասնավորապես գրքի «Ազգային վերածնունդ. Հայաստանի Սովետական Հանրապետությունը» գլուխը: «Սովետական Հայաստան», 21 մարտի

ՀԵԴԿԱՍՏԱՆ

Հնդկահայ գաղութում այսօր կա 4500 հայ: Գաղութն ունի եկեղեցի և երկու դպրոց՝ Մարդասիրական ձեմարան և Դավիթյան օրիորդաց դպրոց: Զեմարանը հիմնադրվել է 1821-ին: Դասավանդությունները տեղի են ունենում անգլիերեն, դասավանդվում են նաև հայոց պատմություն, հայոց լեզու և գրաբար, կրոն:

«Պայլաբ», 8 ապրիլի

ՍԻՐԻԱ

Հալեպում լույս է տեսել Գրիգոր Զոհրապի ստեղծագործությունների ժողովածուն արաբերեն՝ հայագետ, թարգմանիչ, գրող Նիդար խալիլի թարգմանությամբ: Ժողովածուի խորագիրն է՝ «Կյանքից ընտրված պատմվածքներ»: Գրքին կցված է Գրիգոր Զոհրապի կյանքն ու ստեղծագործությունը լուսաբանող առաջաբան:

«Հայրենիքի ձայն», 28 ապրիլի
«Ապագա», 7 օգոստոսի

ԵԳԻՊՏՈՍ

Ալեքսանդրիայում ապրիլի 3-ին հայագետ, պրոֆ. Ֆրեդերիկ Ֆեյդին հայերեն դասախոսություն է կարդացել «Մովսես խորենացիի անձին և պատմության վավերական վեճը» թեմայով: Երևկոյին մասնակցել են մեծ թվով անձինք:

«Արև», 23 ապրիլի

ԱՖՐԻԿԱ

Կանադայում լույս տեսնող «Տեղեկատու» տվյալներով հայերի ընդհանուր բանակը Աֆրիկայում ներկայումս կազմում է 42 հազար մարդ, որոնք հիմնականում ապրում են Եգիպտոսի Արաբական Հանրապետությունում, Եթովպիայում և Սուդանում:

Ինչպես հայտնում է թերթը՝ «Արդեն միջին դարերեն սկսյալ մինչև գրեթե մեր օրերը, Եգիպտոսի մեջ կհիշատակվին տնտեսական և պետական բարձր դիրքի հասած հայազգի բազմաթիվ պաշտոնյաներու անուններ: Այս երկրի հայկա-

կան գաղութը կազմավորված է բյուզանդական շրջանին ի վեր»:

Վերջին տասնամյակում Եգիպտոսից հայերը գաղթել են այլ երկրներ և այժմ Եգիպտոսի Արաբական Հանրապետությունում ապրում է 15 հազար մարդ, որից 10 հազարը Կահիրեում, իսկ մնացյալը՝ Ալեքսանդրիայում և այլ քաղաքներում: Այս գաղթը ծանր է ազդել Եգիպտահայ կյանքի վրա: Այժմ Եգիպտոսում գոյություն ունի ընդամենը երեք հայկական դպրոց, փոքրաթիվ աշակերտներով: Եթովպիայում 10—15 տարի առաջ ապրում էին մոտ 1000 հայեր: «Վերջին տասնամյակին Եգիպտոսին (մասամբ նաև Լիբանանին և Սուրիային) կատարված արտագաղթի հետևանքով հայ նոր խումբեր մտան Եթովպիա...: Այժմ հայության թիվը այստեղ կհասնի 10 հազարի»: Հայերը գլխավորապես կենտրոնացած են Ագիս-Աբեբայում:

Սուդանում 1960 թ. ապրում էին 800 հայեր, այժմ արաբական երկրներից արտագաղթի պատճառով հայերի թիվը Սուդանում կազմում է 2000: Նրանք ապրում են գլխավորապես խարտումում, որտեղ կա մեկ հայկական դպրոց և փոքր դպրիճ, ուր կազմակերպվում են ազգային զանազան միջոցառումներ:

Աֆրիկայի այլ երկրներում ցրված ապրում են ևս մի քանի հազար հայեր, սակայն նրանք չունեն կազմակերպված մշակութային կյանք:

„The Armenian Reporter“
(«Տեղեկատու»), 24 սեպտեմբերի

ԻՌԱՆԻԱ

Պոլսահայ «Ժամանակ» թերթից վերցված տեղեկությունների համաձայն 120 հոգուց բաղկացած սասունցի 16 ընտանիք ժամանել են Պոլիս թշվառագույն վիճակում:

Արաբկիրում կան շուրջ 450 անչափահաս երեխաներ, որոնցից միայն 200-ը հնարավորություն ունեն վարժարան հաճախելու:

Ակնա և շրջակայքի հայ բնակչության թիվը հասնում է 190 հոգու, որոնցից 40-ի մանուկները զրկված են կրթությունից:

Տիվրիկի և շրջակայքի հայերի թիվը հասնում է 200-ի, որոնց մեջ կան մոտ 60 արհեստավորներ:

Փարիզում հրատարակվող «Աշխարհ» թերթը դիմում է Հայրենակցական և այլ միություններին՝ Թուրքիայում ապրող հայերին օգնություն ցույց տալու հույսով:

«Աշխարհ», 30 հոկտեմբերի

ԱՆԳՈՒՐԻԱ

«Արեգակ» ամսաթերթի դադարումից հետո Անգլիայի հայ գաղութը երկար ժամանակ չունեի թերթեր: Երկու տարի առաջ հասարակա-

կան գործիչ և հրապարակագիր Ասատուր Կուլ-
զելյանի խմբագրությամբ սկսել է լույս տեսնել
«Լոնդոն» ամսաթերթը: «Լոնդոն» իր էջերում
լուսաբանում է Անգլիայի հայ համայնքի մշա-
կութային ու հասարակական կյանքը, անդրա-
դառնում հայրենիքի նվաճումներին, ինչպես նաև
տարբեր երկրների հայ գաղթօջախների կյանքին:

«Հայրենիքի ռայն», 24 մարտի

Ապրիլի 26-ին Լոնդոնի Պոլիտեխնիկի սրա-
հում դոկտոր Դևիդ Մարշալ Լանչը դասախո-
սություն է կարդացել Հայաստան և Արարատ
լեռը թեմայով՝ նվիրված ապրիլյան հղեռնի նա-
հատակ հայ մտավորականությանը: Նա մասնա-
վորապես անդրադարձել է հայ ժողովրդի հնա-
գույն մշակույթի արժեքներին, ճարտարապետու-
թյան, մանրանկարչության ինքնատիպ գեղեց-
կությանը և այժմյան Հայաստանի մշակութային
նվաճումներին:

«Պալմա», 24 հունիսի

«Արև», 30 հունիսի

Լոնդոնի «էկոնոմիսթ» շաբաթաթերթի հուլի-
սի 10-ի համարում գրախոսական է տպագրված
Մայքլ Արլենի «Passage to Ararat» գրքի անգ-
լերեն հրատարակության մասին՝ «Հայկական
հարց» վերնագրով: Այդ գրախոսականի թարգ-
մանությունը տպագրված է «Պայքարում»:

«Պալմա», 29 հուլիսի

Լույս է տեսել Լոնդոնի համալսարանի դասա-
խոս Զորո Զարնեթի աշխատությունը միջին
դարերի արվեստի մասին:

Հայկական ճարտարապետության և մագաղաթ-
ների զարդարվեստին նվիրված բաժնում զգալի
տեղ է հատկացված Աղթամարին, Անիին, Զը-
վարթնոցին, Ս. Հռիփսիմեին, Տրդատ ճարտա-
րապետին և Թորոս Ռոսլինին:

Անիի մասին, ինչպես հայտնում է «Ապագան»,
կարդում ենք. «Նույնիսկ այսօր, ավերակ և լքե-
ված, Անին ազդեցիկ տպավորություն մը կը
թողու իր պատերով, մայր տաճարներով և քա-
նի մը այլ եկեղեցիներով, որոնք տակավին կմը-
նան. հակառակ, որ թողված բնության տարրե-
րուն ազդեցության, անոնք աստիճանաբար կփը-
շանան»:

«Ասպար», 11 սեպտեմբերի

ՅՐԱՆՈՒԱ

Փարիզի Արևելյան քաղաքակրթությունների և
լեզուների ազգային ինստիտուտը առանձին գրք-
քույկով լույս է ընծայել 18 հատված Գրիգոր
Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմից:

17 Հանդես, № 1

Հատվածներն ընտրել և թարգմանությունը բնա-
գրից կատարել է Վահե Գոգելը, որն առաջարա-
նում համառոտ ներկայացնելով հայոց պատմու-
թյունը, մասնավորապես կանգ է առել հայ սրե-
զիայի դարգացման գործում Նարեկացու խաղա-
ցած մեծ դերի վրա: Այս թարգմանությունը ա-
ռաջինը չէ: Ժամանակին Արշակ Զուպանյանը ա-
ռանձին հատվածներ է թարգմանել պոեմից, հե-
տագայում ևս կատարվել են «Մատյան ողբեր-
գությանը» թարգմանելու մի շարք փորձեր:

Վահե Գոգելի թարգմանությունը աչքի է ընկ-
նում բանաստեղծական բարձր կուլտուրայով և
բնագրին հարազատ մնալու ձգտումով:

«Դրական քերթ», 19 մարտի

ԺԱՖ-ի և Մշակութային միության կենտրոնում
մայիսի 8-ին կադմակերպվել է Արտավազդ
Պերսեբյանի ֆրանսերեն դասախոսությունը՝ նը-
վիրված հայկական մանրանկարչությանը: Դա-
սախոսողը կանգ է առել նաև հայկական ճար-
տարապետության վրա, ցուցադրվել են 50-ից
ավելի մանրանկարներ:

«Աշխարհ», 29 մայիսի

ԻՏԱԼԻԱ

Միլանի հայկական գաղթավայրում վերջերս
ստեղծվել է «Հայ երիտասարդաց միությունը»,
որը հրատարակում է մշակութային ու հասարա-
կական բովանդակություն ունեցող «Զայն» ամ-
սագիրը: Տեղի են ունենում հավաքույթներ, ներ-
կայացումներ, համերգներ: Ներկայացվել են Ա.
Զեխովի «Արջը» և «Ամուսնության առաջադի-
մը»: Տեղի «Հայ Տունը» վերջերս շքեղ կերպով
տոնել է իր հիմնադրման քսանամյակը:

«Աշխարհ», 17 ապրիլի

ԿԱՆԱԴԱ

Արտասահմանի հայ գաղթավայրերից ամե-
նից երիտասարդը Կանադայի գաղթօջախն է, ուր
ներկայումս 35 հազարից ավելի հայեր են բնակ-
վում. Մոնրեալում՝ 22 հազար, Տորոնտոյում՝
3000, իսկ մնացյալները ցրված են այլ քաղաք-
ներում: Բացված են դպրոցներ, մշակութային
միություններ և այլն:

„The Armentian Reporter“
(«Տեղեկատու»), 10 սեպտեմբերի

ԱՐԳԵՆՏԻՆԱ

Հայոց բարեգործական ընկերության Բուենոս
Այրեսի մասնաճյուղի նախաձեռնությամբ իս-
պաներեն հրատարակվել է Ավետիք Իսահակյանի
ստեղծագործությունների ժողովածուն: Գրքի ըս-
կըզբում տրված է բանաստեղծի կենսագրակա-

նր, որը գրել է Եփրատ Պայրամյանը: Ժողովածուում զետեղված են 18 պոեմներ և պատմվածքներ, որոնք իսպաներեն են թարգմանել Գևորգ Սարաֆյանը, Ստեփան Դալայճյանը, Պերճ Կահեմյանը, Տիգրան Գահվեճյանը:

«Հայրենիքի ձայն», 25 փետրվարի

Բուենոս Այրեսում կան 7 ամենօրյա հայկական վարժարաններ, որտեղ ուսանում են 1500—1600 մանուկներ: Լույս են տեսնում 10 անուն օրաթերթ, շաբաթաթերթ և ամսաթերթեր: Կան երեք ռադիոհաղորդումներ շաբաթվա տարբեր օրերին: Գործում են երգչախմբեր, մշակութային միություններ:

Շուրջ 3000 հայեր ապրում են Կորդոբայում: Այստեղ ևս կան հայկական ակումբներ, եկեղեցի և նրան կից վարժարան:

«Արև», 23 ապրիլի

Ա Մ Ն

Դեռևս 1974 թ. Բոստոնում Միշին արևելյան ուսմանց ընկերության ութերորդ տարեկան համագումարի ժամանակ ստեղծվեց Հայագիտական ուսմանց ընկերությունը: Ընտրվել է վարչական խորհուրդ հետևյալ կազմով. Նինա Գարսոյան (ատենապետ), Ռոբերտ Թոմսոն (գանձապահ), Վարդան Գրիգորյան, Ռիչարդ Հովհաննիսյան, Տիգրան Գույումճյան, Ավետիս Սանճյան, Հակոբ Պարսումյան (քարտուղար): Այժմ Ընկերությունն ունի 75 անդամ:

Հայագիտական ուսմանց ընկերությունը բաղկացած է հայագետներից և հայագիտությամբ լրջորեն հետաքրքրվող գիտնականներից: Կազմակերպության նպատակն է սատարել հայ մշակույթի, պատմության, լեզվի, գրականության, քաղաքական և տնտեսական հարցերի ուսումնասիրությունը: Ընկերությանը անդամակցում են նաև որոշ թվով ոչ հայ գիտնականներ:

«Պայմար», 15 հունվարի

«Ապագա», 31 հունվարի

Անվանի պատմաբան, պրոֆ. Ստենլի Կեռը Ամերիկայի Հայ գրադարանին ու թանգարանին է նվիրել Մարաշի և Զեյթունի ինքնապաշտպանությունների ժամանակ հայերի կողմից գործածված մի շարք զենքեր: Նա գրադարանին է նվիրել նաև «Մարաշի առյուծները» իր գրքի բնագիրը, օգտագործած նյութերը և Մարաշի կոտորածներին ականատես վկաների հետ 1920 թ. փետրվարին ունեցած իր խոսակցությունների ձայնագրությունները:

«Ապագա», 10 հունվարի

Գարրիել Սունդուկյանի ծննդյան 150-ամյակի կապակցությամբ Նյու-Յորքի Հայ տիկնաճ

միության նախաձեռնությամբ բեմադրվել է «Պեպո» կատակերգությունը:

«Նոր կյանք», 16 հունվարի

Լոս Անջելեսում ստեղծվել է փաստագրական, գունավոր մի կինոնկար, որը նկարագրում է Մեծ եղեռնի մանրամասնությունները և պատմում արդի Հայաստանի նվաճումների մասին:

Նկարահանումը իրագործել է «Էթլանթիս Փրոդաքշըն» ընկերությունը: Ֆիլմի տևողությունը 43 րոպե է. կինոնկարն սկսվում է ցեղասպանությանը նախորդող շրջանով, ապա ներկայացնում է ինքնապաշտպանության հերոսամարտերը, Սարդարապատի ճակատամարտը: Ամերիկայի մի շարք արխիվներ տրամադրել են կոտորածների շրջանում ստեղծված և մինչ այժմ անհայտ ֆիլմերի պատահականներ: Տրված են ականատեսների վկայություններ, անվանի պետական գործիչների և ականավոր պատմաբանների կարծիքները Հայկական հարցի մասին: Ծրածշտությունը գրել է Շողուարդ Կոշարյանը:

«Ապագա», 17 հունվարի

Միշիգանի համալսարանում սկսել են դասավանդել հայոց լեզու: Համալսարանի այդ բաժնում սովորում են հարյուրից ավելի ուսանողներ:

«Պայմար», 22 հունվարի

Շիրվանզադեի «Պատվի համարը», անգլերեն լեզվով, ներկայացվել է Նյու Յորքի Կյուպենկյան Մշակութային տան սրահում: Պիեսը անգլերենի է թարգմանել Նշան Փառլաքյանը: Ներկայացումը մեծ հաջողություն է ունեցել:

«Լրաբեր», 28 փետրվարի

«Նյու Յորք թայմսի» փետրվարի 29-ի համարում լույս է տեսել թերթի աշխատակից Հերպերթ Լոթմանի «Հակառակ դարերու ստրկության, հայերը կտուկան» վերնագրով ծավալուն հոդվածը: Հոդվածագիրը տալիս է Հայաստան կատարած իր այցելության տպավորությունները, նկարագրելով Երևանն ու մյուս քաղաքները, պատմական կոթողները, ժողովրդի կենցաղը և զանազան բնագավառներում ձեռք բերած նվաճումները:

«Ապագան» հատվածաբար թարգմանել և տպագրել է այդ հոդվածը:

«Ապագա», 3 ապրիլի

Անգլերեն լույս է տեսել «Erzurum (Carin). Its Armenian History and Traditions» (Կարնո հայոց պատմությունը և ավանդությունները) վերնագրով գիրքը, 270 էջով և սկարնհ-

րով, որը հայերեն ձեռագրից անգլերեն է թարգմանվել ի պատասխան էրզրումի մասին Թուրքիայում հրատարակված 500 էջանոց գրքի, որում ոչ մի հիշատակություն չկա այդ նահանգում հայ ժողովրդի երբեմնի գոյության մասին:

Այս գիրքը ամփոփ կերպով անդրադարձել է այդ նահանգի աշխարհագրական դիրքին, նկարագրում է հայ համայնքի կենցաղն ու սովորությունները, տեղեկություններ է տալիս վանքերի, եկեղեցիների ու դպրոցների մասին: Նմուշներ է բերում Կարնո բարբառից: Հիշատակված են պատմական դեպքերը, 1916—1918 թթ. էրզրումի ջարդերը և ապա խոսվում է սփյուռքի Կարնո հայրենակցական միությունների կազմավորման մասին:

«Պայֆաւ», 3 ապրիլի

Նյու-Ջերսիում Հայ օգնության միությունը Ֆեյրլի Տիքընսըն համալսարանում ուսանողության համար կազմակերպել է ամառային դասընթացներ: Մեկ ամիս տևող այդ դասընթացներում ներկայացվում է հայ մշակույթը իր բաղմազան բնագավառներով: Դասախոսություններ են կարդացվել «Կիլիկիո զինվորական ճարտարապետությունը XII—XIV դդ.» (արվեստագետ Նորա Ներսեսյան), «Ուղեորություններ միջին Արևելքի մեջ», «Ակադեմիական կյանքը Երևանում» (Երևանի պետհամալսարանի ամերիկահայ ուսանողներ Կարեն Պասմաճյան և Լորանս Ավազյան) թեմաներով:

«The Armenian Reporter»
(«Տեղեկատու»), 6 օգոստոսի

Միացյալ Նահանգներում հիմնված առաջին հայկական համալսարանը բացվել է լոս Անջելոսի մոտ գտնվող Լա Վերն Քոլեջում, դոկտ. Արմեն Սարաֆյանի ջանքերով:

Համալսարանի հիմնական նպատակն է պալանել հայ մշակույթը և օտարներին ծանոթացնել նրա հետ:

«The Armenian Reporter»
(«Տեղեկատու»), 20 օգոստոսի

Նյու-Յորքի Գավուքճյան հանդիսասրահում կազմակերպվել է լոնդոնաբնակ թարգմանիչ Միշա Գյուտյանի դասախոսությունը, նվիրված Մարտիրոս Սարյանին: Դասախոսը պատմել է Վարպետի հետ իր հանդիպումների մասին, կանգ է առել նրա կենսագրության վրա, ապա ցուցադրել է նրա նկարների վերատպությունները և Հ. Հաղարյանի հավաքածուից վերցված Սարյանի արժեքավոր գործերից մեկը:

«The Armenian Reporter»
(«Տեղեկատու»), 24 սեպտեմբերի

Նյու-Յորքում լույս տեսնող «The Armenia Reporter»-ը Տեղեկատու շաբաթաթերթը հետաքրքիր տեղեկություններ է հրապարակել Եվրոպայի մի շարք հայկական գաղթօջախների մասին: Այսպես, թերթը գրում է, որ վերջին տվյալների համաձայն հայերի թիվը Հունաստանում հասնում է շուրջ 10 հազարի, որոնք հիմնականում կենտրոնացված են Աթենքում, Պիրեայում, Սալոնիկում և այլուր: Գաղթավայրերում գոյություն ունի 6 հայկական դպրոց, որոնցում հունական պետական ծրագրին ղուգընթաց դասավանդվում են հայոց լեզու, պատմություն, աշխարհագրություն և այլն: Հունահայերը ունեն դանադան միություններ. մշակութային օջախներ, հայերեն լեզվով լույս են ընծայում մի շարք թերթեր:

Իտալիայի հայության թիվը այժմ հասնում է երկու հազարի: Հայերը հիմնականում ապրում են Վենետիկում, Միլանում, Հռոմում, Ժենովայում, Բոլոնիայում և այլ քաղաքներում: Միլանում գոյություն ունի «Հայ տուն» ակումբը: Վերջին տարիներին աշխուժացել են իտալացի և հայ ճարտարապետների կապերը և նրանց միացյալ ջանքերով սկսել են լույս տեսնել հայ ճարտարապետությանը նվիրված գիտական ուսումնասիրություններ և շքեղ ալբոմներ:

Անգլիայում մինչև 1960-ական թթ. ապրում էին ընդամենը 3 հազար հայեր, վերջին տարիներին Անգլիայում ապրող հայերի թիվը հասել է 7 հազարի: Նրանք հիմնականում կենտրոնացած են Լոնդոնում, Լիվերպոլում, Մանչեստրում և այլ քաղաքներում:

Բելգիայում ապրում են շուրջ 2 հազար հայեր. մոտ կեսը՝ Բրյուսելում, մնացյալները Անտվերպենում, Լիեժում:

Հոլանդիայի հայության թիվը կազմում է մոտ հազար մարդ, չնայած ժամանակին այստեղ եղել է հայկական մեծ գաղութ:

Շվեյցարիայում ապրում են շուրջ 2 հազար հայեր՝ Ժնևում, Ցյուրիխում, Լոզանում և այլ քաղաքներում:

Լեհաստանում այժմ ապրում են մոտ 2 հազար հայ: Հայերի թիվն Ավստրիայում կազմում է շուրջ հազար մարդ: «Ավստրիական հայկական միությունը» ձգտում է կապ հաստատել Սովետական Հայաստանի հետ:

«The Armenian Reporter»
(«Տեղեկատու»), 8 հոկտեմբերի

Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ